**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոն ստեղծելու մասին**

Սույն համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման միջազգային բնույթն ու ժամանակակից ծավալները, որոնք վտանգ են ներկայացնում Կողմերի անվտանգության համար,

կարևորելով համագործակցության զարգացումը, ձգտելով փոխգործակցության համակարգմանն ու հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման հայտնաբերված ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների ձեռնարկմանը,

հիմնվելով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների ղեկավարների խորհուրդ կազմավորելու մասին համաձայնագրի և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման), ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջազգային պայմանագրերի վրա,

գիտակցելով, որ նման համագործակցության զարգացումը բխում է իրենց շահերից,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության նպատակներից և խնդիրներից,

ճանաչելով Ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախմբի (այսուհետ՝ ՖԱԹՖ) միջազգային ստանդարտները,

հիմնվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների ու նորմերի վրա,

**համաձայնեցին հետևյալի մասին.**

**Հոդված 1. Համաձայնագրի առարկան**

Արդյունավետ միջպետական տեղեկատվական փոխգործակցություն ապահովելու և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատում անցկացնելու նպատակով Կողմերը ստեղծում են Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի

գնահատման միջազգային կենտրոն (ՌԳՄԿ):

## Հոդված 2. Հիմնական եզրույթները և հասկացությունները

1. Սույն համաձայնագրի նպատակներով գործածվում են հետևյալ հիմնական եզրույթները.

**ՌԳՄԿ տեղեկատվական համակարգ**՝ ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ստեղծման և Կողմերի միջգերատեսչական տեղեկատվական արդյունավետ փոխգործակցության ապահովման, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման անցկացման համար պաշտպանված տեղեկատվական համակարգ.

**հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատում՝** Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ ՖՀՍՂԽ) համակարգման ներքո Կողմերի համատեղ գործունեություն՝ Կողմերի տարածքներում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման անդրսահմանային դրսևորումների հետ կապված սպառնալիքների, խոցելիությունների և հետևանքների գնահատման, ռիսկերի որոշման, ինչպես նաև դրանց նվազեցմանն ուղղված համատեղ միջոցների մշակման ուղղությամբ:

2. Ռիսկերի գնահատման ազգային կենտրոն ասելով՝ հասկանում ենք Կողմի՝ ֆինանսական հետախուզության ստորաբաժանման գործառույթներ իրականացնող իրավասու մարմին:

## Հոդված 3. ՌԳՄԿ գործունեության կազմակերպչական հարցերը

1. ՌԳՄԿ-ի գործունեության կազմակերպատեխնիկական և տեղեկատվական ապահովումն իրականացնում է ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի օպերատորը (այսուհետ՝ ՌԳՄԿ օպերատոր):

2. ՌԳՄԿ օպերատորի գործառույթներն իրականացնում է Ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայությունը (Ռուսաստանի Դաշնություն):

3. ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի տվյալների մշակման ծրագրային և ապարատային համալիրները տեղակայված են Ռուսաստանի Դաշնության տարածքում:

4. ՌԳՄԿ-ի օպերատորն իր գործունեության մեջ առաջնորդվում է կիրառելի միջազգային պայմանագրերով և ՖՀՍՂԽ կողմից ընդունված որոշումներով, ինչպես նաև սույն համաձայնագրով:

5. ՌԳՄԿ օպերատորը՝

ա) կազմակերպում է ՌԳՄԿ տեղեկատվական համակարգին միացումն ու ապահովում է ռիսկերի գնահատման ազգային կենտրոնների մուտքը ՌԳՄԿ տեղեկատվական համակարգ, ինչպես նաև իրականացնում է այլ տեխնիկական միջոցառումներ՝ ՌԳՄԿ տեղեկատվական համակարգին միանալու, ՖՀՍՂԽ կողմից հաստատված տեղեկատվության բեռնման և օգտագործման կանոնակարգերին համապատասխան.

բ) նախապատրաստում և Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներին է ուղարկում ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի տեղեկատվական համալրմանը (թարմացմանը) և ՌԳՄԿ գործունեությանը վերաբերող տեխնիկական նյութերը.

գ) իրականացնում է նյութատեխնիկական ապահովման գնահատումը, ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի տեխնիկական փաստաթղթերի հաշվառումն ու պահպանումը՝ պահպանելով գաղտնիության ռեժիմը.

դ) ապահովում է ՌԳՄԿ տվյալների տեղեկատվական զանգվածների հասանելիությունը, ամբողջականությունն ու գաղտնիությունը, ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքի և մշակված տվյալների պաշտպանությունը ցանկացած չարտոնված (ապօրինի) օգտագործումից, կազմակերպում և (կամ) տեխնիկական աջակցություն է ցուցաբերում ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի աշխատանքի ընթացքում առաջացած անսարքությունների և խափանումների վերացման գործում.

ե) իրականացնում է այլ գործառույթներ՝ ելնելով սույն համաձայնագրով սահմանված խնդիրներից:

6. ՌԳՄԿ օպերատորը հաշվետու է ՖՀՍՂԽ-ին՝ սույն համաձայնագրով նրան վերապահված գործառույթների իրականացման հարցերով:

## Հոդված 4. Տեղեկատվության գաղտնիությունը

1. Սույն համաձայնագրի շրջանակներում ստացված և ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում զետեղված տեղեկատվությունը գաղտնի է, եթե այն տրամադրած Կողմն ուղղակիորեն չի հայտարարել հակառակը, և դրա վրա տարածվում է Կողմերի օրենսդրությամբ նախատեսված՝ տեղեկատվության պաշտպանության ռեժիմը:

2. Յուրաքանչյուր Կողմ իր օրենսդրությանը, սույն համաձայնագրին և կիրառելի այլ միջազգային պայմանագրերի համապատասխան ապահովում է գաղտնիության ռեժիմի պահպանումը, իրականացնում է անհրաժեշտ կազմակերպատեխնիկական և իրավական միջոցները, որոնք ուղղված են սույն համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվության պաշտպանությանը, ներառյալ՝ պատասխանատվության միջոցների կիրառումը՝ պատահական կամ ոչ իրավաչափ ոչնչացումից, փոփոխումից,

հրապարակումից, ինչպես նաև ցանկացած այլ ոչ իրավաչափ օգտագործումից:

3. ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում պարունակվող տեղեկատվության օգտագործման նպատակը և հնարավորությունը որոշում է տվյալ տեղեկատվությունը տրամադրող Կողմը:

Տեղեկատվության պահպանման ժամկետը որոշում է տեղեկատվությունը տրամադրած Կողմը՝ ելնելով այն նպատակից, որի համար տվյալ տեղեկատվությունը տեղադրվել, հարցվել և (կամ) տրամադրվել է:

4. Սույն համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը, առանց այն տեղադրած և (կամ) տրամադրած Կողմի նախնական գրավոր համաձայնության, չի կարող օգտագործվել այլ նպատակներով, քան նրանց, որոնց համար այն տեղադրվել է ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում, հարցվել և (կամ) տրամադրվել է:

## Հոդված 5. Համաձայնագրի խնդիրները

1. Սույն համաձայնագիրը կնքվում է հետևյալ հիմնական խնդիրների կատարման նպատակով.

ա) Կողմերի միջև տվյալների և էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանված փոխանակում ապահովող տեղեկատվական համակարգի ստեղծում.

բ) Կողմերին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի արդյունավետ բացահայտումն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում.

գ) Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների էլեկտրոնային փոխգործակցության միասնական ստանդարտների ներդրում՝ միատեսակ ձևաչափերի սահմանման միջոցով.

դ) սույն համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված տվյալների կատեգորիաներով համալրվող ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ստեղծում և դրանց հասանելիության ապահովում.

ե) տեղեկատվության կուտակում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատումն անցկացնելու և դրա արդյունքները ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում տեղադրելու համար.

զ) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատում անցկացնելու նպատակով, ինչպես նաև միջպետական տեղեկատվական փոխգործակցության ժամանակ օգտագործվող տեղեկատվության պաշտպանության և տեղեկությունների գաղտնիության ռեժիմի ապահովում:

2. Սույն համաձայնագրի իրականացումը չի ազդում Կողմերի ֆինանսական

հետախուզության ստորաբաժանումների գործառնական անկախության վրա, ինչպես դա սահմանված է ՖԱԹՖ-ի հանձնարարականներով:

## Հոդված 6. ՌԳՄԿ հիմնական գործառույթները

ՌԳՄԿ հիմնական գործառույթների շարքին են դասվում՝

ա) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման անցկացման ապահովումը՝ համապատասխան տվյալների բազաների ձևավորման միջոցով.

բ) տեղեկատվության պաշտպանված փոխանակման ապահովումը՝ Կողմերի համար գերակա ուղղություններով.

գ) Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների փոխգործակցության ապահովումը՝ միատեսակ ձևաչափերի միջոցով անհրաժեշտ տեղեկությունների կուտակման, մշակման ու վերլուծության համար:

## Հոդված 7. ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի տեղեկատվական համալրումը

1. Այն տվյալների կատեգորիաների ցանկը, որոնք կարող են տեղադրվել ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում (անհրաժեշտության դեպքում՝ Կողմերի շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնելուց հետո), և դրանց ձևավորման մեթոդաբանությունը հաստատվում են ՖՀՍՂԽ-ի որոշմամբ: Տվյալների կատեգորիաների ցանկը ներառում է՝

ա) բաց աղբյուրներից տվյալներ.

բ) մակրովերլուծական հաշվետվություններ.

գ) ռիսկ-ազդանշաններ.

դ) տեղեկություններ՝ ՖՀՍՂԽ-ի որոշումներին համապատասխան:

2. Սույն համաձայնագրի նպատակներով՝

մակրովերլուծական հաշվետվություն ասելով՝ հասկանում ենք Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանման կողմից որոշակի ժամանակահատվածում ձևավորված և ընդհանրական տվյալներ պարունակող տեղեկատվություն՝ առանց նշելու ֆինանսական և այլ հաստատությունների (կազմակերպությունների, անձանց) սուբյեկտների և անվանումների նույնականացման տվյալները՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ֆինանսական գործառնությունների (գործարքների) ծավալների և բնութագրերի վերաբերյալ՝ կասկածելի գործառնությունների (գործարքների) մասին հաղորդումների և այլ տեղեկատվության վերլուծության հիման վրա.

ռիսկ-ազդանշան ասելով՝ հասկանում ենք Կողմերի տարածքներում ահաբեկչության ֆինանսավորման և (կամ) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և դրանց հետ կապված նախորդող հանցագործությունների կասկածի վերաբերյալ տեղեկատվություն, որը նախապատրաստվել է Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների կողմից՝ կասկածելի գործառնությունների (գործարքների) վերաբերյալ հաղորդումների և այլ տեղեկատվության վերլուծության հիման վրա, որին արձագանքելու համար պահանջվում են Կողմերի համատեղ միջոցառումները:

3. Անհրաժեշտության դեպքում Կողմերն իրավունք ունեն սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված տվյալների կատեգորիաներից դուրս տրամադրելու այլ տեղեկատվություն՝ սույն համաձայնագրի խնդիրների լուծման նպատակով ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում տեղադրելու համար:

4. ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում տեղադրելու համար տրամադրվող տվյալների ծավալը, տվյալների գաղտնիության և դրանց օգտագործման ռեժիմը որոշում է տրամադրող Կողմը:

5. Ապարատածրագրային միջոցներով տեղեկատվության փոխանցումը ՌԳՄԿ տեղեկատվական համակարգ իրականացնում են Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները:

6. Ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների կողմից սույն հոդվածին համապատասխան ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում տեղադրված տեղեկատվության հետագա փոխանցման հնարավորությունը որոշվում է՝ հաշվի առնելով տրամադրող Կողմի սահմանված գաղտնիության ռեժիմի պահպանումը:

## Հոդված 8. ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի օգտագործումը ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման համար

1. Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն օգտագործում են ՌԳՄԿ տեղեկատվական համակարգն այն դրամական միջոցների կամ այլ գույքի, վիրտուալ ակտիվների հետ գործառնությունների (գործարքների) մասին իրենց տրամադրության տակ եղած տեղեկատվության փոխանակման համար, որոնց վերաբերյալ կասկածներ կան, որ դրանք կապված են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման), ահաբեկչության ֆինանսավորման և դրա հետ կապված այլ հանցագործությունների հետ, ինչպես նաև այդ գործառնությունների կատարմանը մասնակցող անձանց և կազմակերպությունների մասին տեղեկատվության փոխանակման համար:

2. ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկատվության փոխանակումն իրականացվում է գրավոր ձևով՝ Կողմերի ֆինանսական

հետախուզության ստորաբաժանումների նախաձեռնությամբ կամ նրանց հարցումների հիման վրա, այդ թվում՝ Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների հետ համաձայնեցմամբ՝ տեղեկատվության փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործման միջոցով:

**Հոդված 9. Հարցումներ**

1. Հարցումը ստորագրում է հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանման ղեկավարը կամ նրա տեղակալը: Հարցումը պետք է ներառի՝

ա) հարցում ներկայացնող և հարցում ստացող Կողմերի իրավասու մարմինների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների անվանումները.

բ) գործի էության համառոտ նկարագիրը (ֆաբուլան).

գ) հարցման նպատակի նշումը և հիմնավորումը.

դ) հարցվող աջակցության (կամ հարցվող տեղեկատվության) բովանդակությունը.

ե) հարցման կատարման ժամկետը (եթե հարցումը հրատապ է, ապա հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումը հիմնավորում է հրատապ հարցման անհրաժեշտությունը).

զ) հարցվող տեղեկատվության օգտագործման նպատակը.

է) հարցումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

2. Անհրաժեշտության դեպքում հարցում ստացող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումը կարող է հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումից պահանջել հարցման պատշաճ կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն:

3. Հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումը կարող է մերժել հարցման կատարումը, եթե դա հակասում է հարցվող Կողմի ազգային շահերին կամ օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին, ինչպես նաև, եթե հարցումը չի համապատասխանում սույն համաձայնագրի դրույթներին:

Եթե հարցումը չի կարող կատարվել, ապա հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումն այդ մասին գրավոր տեղեկացնում է հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանմանը՝ նշելով մերժման պատճառը:

4. Հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումը կարող է հետաձգել հարցման կատարումը կամ հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանման հետ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա հարցումը կատարել մասնակիորեն կամ այնպիսի պայմաններով, որոնց պահպանումը նրանց կողմից անհրաժեշտ է ճանաչվել, եթե հարցման կատարումը

կարող է վնաս պատճառել օպերատիվ հետախուզական միջոցառումների անցկացմանը, մինչդատական վարույթին կամ դատական քննությանը, որոնք իրականացնում է հարցվող Կողմը:

5. Հարցումները և դրանց պատասխանները ներկայացվում են ռուսերենով, եթե Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

6. Հարցումը կատարվում է հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 60 օր անց, եթե Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն այլ բան չեն պայմանավորվել:

7. Հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումն իր նախաձեռնությամբ կամ հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանման հարցման հիման վրա տեղեկատվություն է ուղարկում սույն համաձայնագրի շրջանակներում հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումից ստացված տեղեկությունների օգտագործման արդյունքների մասին:

## Հոդված 10. Ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների փոխգործակցության այլ եղանակներ

1. Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները համատեղ որոշում են միմյանց միջև տեղեկատվության փոխանակման կարգը՝ Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, և անհրաժեշտության դեպքում խորհրդակցություններ են անցկացնում սույն համաձայնագրի իրականացման հարցերով:

2. Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն ըստ հարցման կամ իրենց նախաձեռնությամբ կարող են փոխանակվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու ոլորտում կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության մասին տեղեկատվությամբ և տվյալ ոլորտում լավագույն պրակտիկայով: Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները կարող են անցկացնել համատեղ համաժողովներ և սեմինարներ՝ փորձի փոխանակման ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման համար:

## Հոդված 11. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատումը

1. Կողմերը ՖՀՍՂԽ-ի համակարգմամբ համատեղ իրականացնում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և

ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատումը:

2. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման անցկացման կարգն ու պայմանները որոշվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման անցկացման մեթոդաբանությամբ, որը հաստատվում է ՖՀՍՂԽ որոշմամբ:

3. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատումն իրականացվում է ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների կողմից տեղադրված տվյալների օգտագործմամբ:

4. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման նպատակով օգտագործվող տեղեկատվությունը սույն համաձայնագրին համապատասխան գաղտնի է, եթե այն տրամադրող Կողմը գրավոր ձևով այլ բան չի հայտարարել:

5. ՖՀՍՂԽ-ն հաստատում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման արդյունքները, որոշում է դրանց գաղտնիության աստիճանը Կողմերի հետ համաձայնեցմամբ: Հաշվի առնելով ՖՀՍՂԽ-ի որոշումները՝ Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն ինքնուրույն են որոշում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման արդյունքներն ստացողների շրջանակը և տրամադրման կարգը:

### Հոդված 12. ՌԳՄԿ-ի գործունեության ֆինանսավորումը

ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման և զարգացման ուղղությամբ աշխատանքների ֆինանսավորումն իրականացնում է ՌԳՄԿ օպերատորը՝ ֆինանսական մշտադիտարկման դաշնային ծառայության կողմից նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

### Հոդված 13. Փոփոխությունների կատարումը

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը կազմող փոփոխություններ, որոնք ձևակերպվում են

համապատասխան արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

**Հոդված 14. Վեճերի լուծումը**

Սույն համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ժամանակ Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

**Հոդված 15. Ուժի մեջ մտնելը**

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը համաձայնագիրը ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու պահից 30 օրը լրանալուց հետո:

2. Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումներն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

**Հոդված 16. Միանալը**

Սույն համաձայնագիրն այն ստորագրած և դրան միացած պետությունների համաձայնությամբ ուժի մեջ մտնելուց հետո բաց է ցանկացած պետության կողմից դրան միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Ավանդապահին միանալու մասին փաստաթուղթը փոխանցած պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած և դրան միացած պետությունների՝ միանալու վերաբերյալ համաձայնության մասին վերջին ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

**Հոդված 17. Գործողության դադարեցումը**

1. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն համաձայնագրից՝ իր այդ մտադրության մասին դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին և կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

2. Սույն համաձայնագրի՝ տեղեկատվության գաղտնիության մասին դրույթները շարունակում են կիրառվել սույն համաձայնագրի գործողությունը դադարելուց կամ

դրանից դուրս գալուց հետո:

Կատարված է Բիշքեկ քաղաքում 2023 թվականի հոկտեմբերի 13-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն համաձայնագիրն ստորագրած պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կողմից՝**

________________________

**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Տաջիկստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Բելառուսի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Թուրքմենստանի կողմից՝**

**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ուզբեկստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ուկրաինայի կողմից՝**

**Մոլդովայի Հանրապետության կողմից՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի հոկտեմբերի 13-ին ստորագրված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**